Պարույր Սևակ

Անլռելի զանգակատուն

2

ՂՈՂԱՆՋ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ

Եվ վարանումից, վեճերից հետո,
Իբրև եզակի մի բացառություն,
Կանոնագրքի մի զանցառություն,
Անհայտ օրենքի չգրված կետով՝
Լոկ ձայնի՛ համար
Համարվեց նա սան:
Այդ կիզիչ ամառ
Նոր բոթեր հասան:
Սուլթան Համիդը, ի փառս ալլահի,
Ի նշան ահի
Ամեն մի հայի
Եվ ի գիտություն
Իր երկար քթով ամեն տեղ մտնող
Այդ Եվրոպայի,-
Սուլթան Համիդը տարավ ու բերեց
Եվ -
Ապտակի տեղ,

Ապտակի նման -
Շրը՛խկ՝
«Հայաստան» բառը արգելեց,
Լեզվից, քարտեզից, գրքերից քերեց.
-Ջնջում եմ, չկա՛,
Ալլա՛հը վկա:
Եվ չի՛ էլ եղել,
Եվ չի՛ լինելու.
Քանդողը ես եմ,
Ո՞վ է շինելու...
Իսկապես. քանդածն ո՞վ պիտի շիներ,
Թե Ալեքսանդրը ցարն էլ իր հերթին՝
Սուրբ խաչելության նշանը սրտին,
Քրիստոնեական ժպիտը շրթին՝
Իր «ամենագութ» ձեռքով ցարական
Հայոց պատմությունն, իբրև առարկա,
Արգելեց բոլոր հայ դպրոցներում.
-Չկա՛, չի՛ եղել...
Սուլթանն ու արքան
Ձեռք-ձեռքի տվին
Միևնույն թվին...
Իսկ Ճեմարանո՛ւմ...
Թուրքախոս սանի կարոտ բերանում,
Անուշ մրգի պես, բայց չհալվելով,
Ի՛նչ բառեր էին հիմա քաղցրանում,
Անհայտությունից հանկարծ բարձրանում
Քաջն Հայկ, Արամ,
Տիգրան Մեծ, Արա,
Մաշտոց, Եղիշե,-
Ո՞ր մեկին հիշել...

Եվ չժանգոտած հին բանալիքը մեսրոպյան տառի,
Նախ՝ դժվարությամբ,
Բայց հետզհետե մի լուրջ բարությամբ,
Ուրախ զնգոցով անվերջ պտըտվեց կողպեքում բառի
Ու բացեց դռներ՝
Սխրագործության,
Դարպասներ բացեց՝
Ահեղ փորձության,
Եվ զարմանալի՛, անհավատալի՛, ճշմարի՛տ դեպքեր՝
Մահադարձությա՛ն...
Իր այդ բանալուն հավետ պարտական՝
Ընկել էր տղան մի կախարդական,
Մի հեքիաթային վիթխարի դղյակ,
Որին մինչև այդ ինքն էր անտեղյակ:
Ե՛վ սերտարանում, և՛ իր պաղ խցում,
Աղոտ լույսի տակ իր նավթավառի,
Մինչևիսկ եթե ականջն էր խցում՝
Փանդիռն էր հնչում Գողթան գավառի
Մարտ ու սեր երգող ձայնեղ գուսանաց.
Ե՛վ խրախճանքը հին Վարդավառի,
Ե՛վ մեհյաններում մորթվող տավարի
Բառաչը խռպոտ, բոռոցը հորդուն
Տարածայնում էր արդեն կուսանաց
Քրիստոսասեր թախծոտ մեղեդուն.
Հետո խուժում էր, մեղեդուն խեղդում
Վայրի աղմուկը վայրի քուշանաց,
Դոփ ու տրոփը բարբարոս հոնաց
Ու քաղաքակիրթ -
Նույնքան բիրտ -
Հունաց...

Թե՛ խժաձայն սույլ հռովմեական մարտափողերի,
Թե՛ բութ խոխոռոց պարսից ահավոր մարտափողերի,
Թե՛ սելջուկական սրերի շառաչ,
Թե՛ կտրիճների մահազդու հառաչ,
Թե՛ մոնղոլական աղեղից պոկված երկաթե նետեր՝
Ասես թշնամու հեռավոր մատեր,
Որ աչք են հանում մի աջ ու մի ձախ.
Թե՛ վահանների ծնծղան անծիծաղ,
Թե՛ շեփորումը զորապետերի,
Խոլ ելևէջը արյան գետերի,
Հրդեհի ձեռքում հողմերն անսահման,-
Արձագանքում են նրա ականջում,
Եվ ինքնամոռաց՝ «Մարե՛ ջան, ամա՜ն»,-
Տեղից ցատկելով ակամա կանչում,
Ճչում է ձայնով փոքրիկ զազանի
Եվ արթնացընում մի քնած սանի,
Որ վեր է թռչում, նույնպես վախեցած,
Աչքերն է ճմլում, մազերն է խառնում,
Վերակացուի անվամբ սպառնում
Եվ, մինչև անգամ իր տված հարցի
Պատասխանի դեմ ականջը խցած՝
Հակում է նորից իր գլուխը ցած՝
Մագնիսի նման ձգող չոր բարձին...

ՂՈՂԱՆՋ ՀՍԿՄԱՆ

Ամիսներն են դանդաղ հոսում,-
Ու կարդում է նա Մանրուսում:
Թո՛ղ օրերը տրվեն վազքի,-
Նա զննում է մեռյալ Խազգիրք:

...Գանձե՛ր, գանձե՛ր՝ փականքի տակ,
Իսկ գանձերի տերն՝ անգիտակ:
Անբանալի-գոց գանձարան...
Կյանքդ լինի թող տանջարան.
Թեկուզ մեռնես, բայց ման արի,
Փնտրիր, գտիր այդ բանալին:
Եվ աչքերն է ցավով թարթում:
-Տարիները թող որ վազեն:
Աչքերի դեմ, քուն թե արթուն,
Չվերծանված խազե՛ր, խազե՛ր.-
Մեղեդիներ ու սաղմոսներ՝
Ոչ թե մինչև վանքի գմբեթ
Սուրբ խորանից երկարացած,
Այլ բրածո և քարացած.
Աստվածային վսեմ «Տաղ»-եր,
Որ ծալքերում մագաղաթի
Ժամանակն է փոշով թաղել.
Գանձի նման անգին «Գանձ»-եր,
Բայց ի՞նչ օգուտ, երբ չեն կարող
Կիզել անձեր,
Հոգի խանձել.
Արձանացած-անշարժ «Փոխ»-եր,-
Ինչպե՞ս շարժել, տեղից փոխել.
Դիակնացած «Քարոզ» ու «Ճառ»,-
Ի՞նչպես գտնել հարության ճար.
«Եղիցի»-ներ, «Ավետիս»-ներ.-
Ա՛խ, թե նրանց հնչող տեսներ...
Տարիներն են նորից հոսում,
Իսկ նրա դեմ՝ միշտ Մանրուսում,
Իսկ նրա դեմ՝ անվերջ Խազգիրք,-

Շո՛ւնչը, հոգի՛ն, տրո՜փն ազգի,
Որ դարձել է խազ ու նշան,
Մագաղաթի թերթեր խշշան:
Կարծես թե մարդ հանկարծակի
Ընկել է լուռ մի շիրմատուն,
Ու լեզվազուրկ շիրմաքարեր
Նախանձով են նայում մարդուն:
Շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր, շիրմաքարե՛ր,
Եվ մամուռի ու փոշու տակ՝ շիրմագրրե՛ր,
Եվ ի՜նչ խոսուն շիրմագրրեր.-
Արծիվ, Աղավնեկ, Բազե, Վարուժնակ,
Տանուտրակ, Ծիծեռն ու Տիրոցի ձագ.
Յուրաքանչյուրը ինչպե՞ս է ճախրել,
Եվ ո՞ւր է իջել, ինչպիսի՞ թևով...
Աղաչանք, Հիվանդ, Տժգույն ու Լալկան.
Յուրաքանչյուրը ինչպե՞ս է տխրել,
Ինչպե՞ս հառաչել, լացել ի՞նչ ձևով...
Դարբին ու Երկաթ.
Ինչպե՞ս էր զնգում,
Ինչպիսի՞ սալի,
Ինչպե՞ս էր մարդու հոգին պար ածում...
Հովիվ ու Ոչխար.
Ո՞նց էր շնկշնկում,
Ի՞նչ քար ու սարի,
Ի՞նչ շշուկով էր հոտը արածում...
Եվ նա վիրավոր աչքերն է թարթում:
-Թո՛ղ ժամանակը անշտապ վազեր:
Իսկ աչքերի դեմ՝ քնած թե արթուն՝
Նորի՛ց բերանփակ խազեր ու խազեր:
Խազեր Ձայնուժի.

Աստված չի՛ հուշի...
Խազեր Բանալի.
Ի՛նքդ ման արի...
Խազեր Կոչական ու Կետադրրող.
Մի՛ հուսահատվիր,
Կարո՛ղ ես, կարո՞ղ...
Խազեր Կիսանիշ և Ամանակի.
Կարիք ես զգում
Լոկ... ժամանակի՞...

ՂՈՂԱՆՋ ՄԵՂՍԱԿԱՆ

Իսկ ժամանակը իրենն էր անում:
Ամիսներն ամսին՝ անցնում են տարիք,
Եվ զգում է նա... այդ ինչի՞ կարիք...
Դեղնած գրքերի փոշին բերանում՝
Նա դուռն է բանում իր խոնավ խցի
Ու դուրս է գալիս՝ փոքր-ինչ օդ ծծի:
Կանաչ բնառվից անվայել թռնում
Եվ այգիների ճամփան է բռնում:
Ճամփան տանում է դեպի Արարատ,
Դեպի Մայր Արաքս՝ ճոխ դաշտի միջով:
Գարուն է գալիս:
Օդը՝ անարատ,
Բույրով ու թույրով, լույսով է առատ
Ու նրա ջահել սրտի պես՝ ճիչով:
Գարուն է գալիս:
Ձներն են լալիս,
Որ առու-առու՝
Կրքից պղտորված,

Իրար գիրկ վազեն:
Բացվող գարնան հետ վերադառնալիս՝
Ջույգեր են կազմում տատրակը, բազեն:
Ծառեր ու խոտեր ծաղիկ են տալիս,
Որ բնազդական-բուսական սիրով
Իրար փոշոտեն:
Որսի դուրս գալիս՝
Քիչ է մնում թե գազաններն անգամ
Իրար հոշոտեն:
Իսկ սի՛րտը, սի՛րտը...
Իսկ սիրտը մարդու,
Սիրո հովերից այլևրս արթուն,
Գարնան գետի պես մերթ՝ վարար հորդում,
Մերթ անձրևի պես լալիս է-լալի՛ս,
Ուզում է մեկին ասել.
«Ցանկալի՛ս»,
Ուզում է մեկին խեղդվելով ասել.
«Իմ երա՛զ ու սե՛ր,
Դու ե՞րբ ես գալու»...
Գարուն է, գարուն:
Դաղձի բուրմունքից հարբել է առուն
Եվ ափերին է մի գլուխ զարկվում ութաձև քայլով,
Ինչպես գինովն է խփվում պատերին:
Նայողի աչքը խտուտ են ածում գույնով ու փայլով
Խլվըլան փնջեր կարմիր պուտերի,
Կապույտ անմոռուկ ու խորոտ-մորոտ:
Ճամփի եզրերին, կարճլիկ ու կոլոտ՝
Բարեգութ դահճի ձեռքով գլխատված շարքն է թթերի,
Որ արդեն խուրձ-խուրձ շիվեր են տվել՝
Մեկի տեղ քսան ու դեռ ավելի,

Եվ հեռվից հիմա
Նման են արդյոք... մի փայտե պոչով մեծ ցախավելի՞,
Որ բիլ երկնքից պիտի որ - ա՛յ-ա՛յ - ամենավերջին
Ամպերը ջնջի,
Թե՞ կոթի վրա տնկված վրձինի,
Որ բիլ երկինքը ուր որ է պիտի կանաչ դարձընի...
Նա ինքնամոռաց գնում է առաջ:
Հրավիրականչ շեփորի նման՝
Հնչում է ցուլի կարոտի բառաչ...
Եվ ջրից թափուր սափորի նման՝
Քամու շնչի տակ անբառ երգում է փչակը ծառի:
Այգիների մեջ թաղված Տաճարի
Գմբեթն է միայն հեռվից երևում
Ծաղկած ծառերի գլխավերևում՝
Անհայտ թռչունի գլխիվայր շրջված մեծ բույնի նման:
Մի վաղուց ջարդված կավե հին աման,
Նա՛ էլ չի փրկվել գարնան վարակից.
Նրա շուրջբոլոր մամուռն է քաշել կանաչ պարագիծ:
Վիրավոր սնձի բացված երակից
Տաք արյան տեղակ պաղ կաթ է ծորում:
Դեղձենիների անբոց կրակից
Կայծեր են թռչում դիմացի ձորում:
Իսկ մամռակալած վիմափոր գուռին
Մի հին փչակված-բնաքանդ ուռի
Ծեր մուրացկանի ձեռքերի նման
Իր կոշտուկապատ ճյուղերն է մեկնել
Ու սրթսրթում է կարծես թե քաղցից...
Եվ դաշտն են ելել հարս ու աղջիկներ,
Որը՝ սիբեխի, իսկ որը՝ դաղձի:
Մերթ հեռանում են

Ու մերթ՝ կուտակվում,
Մեկ կռանում են
Ու մեկ՝ շիտակվում,
Մերթ՝ ուրախ ճիչով, ասես կարոտով՝
Իրար են պարզում լխտիկ թևերը,
Ցուցադրրում են, կարծես թե դիտմամբ,
Փակ մարմինների բոլոր ձևերը,
Որ... աբեղայի սիրտը խռովեն,
Որ... աբեղային անհուր խորովեն,
Որ... աստված ու նա կռվեն-խռովեն...
Եվ մի անօրե՛ն,
Մի անվանելի՛,
Անանվանելի՛ ինչ-որ զգացում
Կպչում է նրա սրտին ու անձին՝
Կաթի պես սնձի:
Նա շրթունքներն է ակամա կրծում,
Որ ցավը օգնի:
Իզուր է կարծում,
Թե ամենազոր գարնան դավերին
Կհաղթի ուժովն ինչ-որ ցավերի:
Եվ, ճարահատյալ, աչքերն է գոցում,
Որ սատանեկան տեսիլքն ավերի,
Բայց մթությունը... սա էլ իր սևով
Նրանց վառվրռուն ձևերն ընդգրծում,
Մաքրագրրում է, շեշտում ավելի:
Խաչակնքել է ուզում աբեղան,
Բայց նրա աջը շարժվել չի ուզում,
Ուզում է կանչել մի բերան «մեղա»,
Բայց... կապ է ընկնում և խոսնակ լեզուն:
Եվ, բնազդաբար, նա սիրտն է բռնում սև սքեմի տակ,

Նա սիրտն է սեղմում ափերով իր տաք,
Որ չտրրոփի այդպես խենթորեն,
Որ չտրրոփի և... չտրրաքի՝
Պղպրջող գինու ափեափ լեցուն սափորի նման:
Մինչդեռ անվտանգ խուցի դարակին
Ննջում են տաղեր՝ կարոտ հորինման,
Մինչդեռ անփորձանք խուցի դարակին
Կարոտով նրա ճամփան են պահում
Անլեզու խազեր:
Նա ետ է դառնում, ուզում է վազել,
Գնալ ու նորից վերծանել համառ,
Որ ցավն աչքերի թերևս մի օր
Փոխարկվի մի նոր
Ցնծուն հանդեսի՝
Իր, ուրիշների... ականջի համար:
Նա ետ է դառնում իր ճամփի կեսից,
Որ գնա կրկին աչքի լույս մաշի
Եվ մի կերպ պրծնի իր սրտին կպած
Այդ կաթից սնձի,
Սոսնձից,
Խեժից,-
Եվ այդ վայրկյանին հանկարծ՝
Սոնա՛ յար,
Սոնա՛ յար,-
Թնդում,
Ու երգը խնդուն
Ընկնում է ետքից ու հետապնդում,
Կախվում է նրա փիլոնի փեշից,
Թառում է նրա փակված կոպերին,
Հալչում է նրա այրվող ափերին,

Ոտքերի առաջ թավալ է տալիս՝
Ճամփան է փակում և հիշեցընում,
Թե Վարդավառն է վերստին գալիս.
Սոնա՛ յար,
Սոնա՛ ...
Ցնծությամբ օծված ծաղիկ է ծնում,
Ծաղիկների պես դաշտերով ցանում
Ջանգյուլում կանչող հարս-աղջիկներին.
Սոնա՛ յար,
Սոնա՛ ...
Քայլը հնչում է նո՛ւյն չափով՝
Սոնա՛ ...
Կուրծքը շնչում է նո՛ւյն չափով՝
Սիրո՛ւն...
...Ու երբ, հոգնատանջ, աքլորականչին
Նա լուռ ննջում է,
Ինչ-որ մի Սոնա
Գալիս է թեքվում նրա ականջին
Ու շշնջում է,
Թե սարալանջին
Պառկած է քույրը՝ անունը Խումար,
Ու երեսն էլ բաց՝ տեսնելու համար:
...Շողերով հինված իր գորգը թողել,
Առվի արծաթով երեսը ցողել,
Կանգնել է ճամփին մի շաղոտ Շողեր՝
Բոլոր գլուխը պսակած ծամով,
Աչքերը նման սուրբ աստվածամոր:
-«Իսկ դու՝ անխելքդ, վախենամ քնես,
Վախենամ քնես, քնով ընկընես՝
Արտերդ մնան առանց հերկելու,

Ու երբ վեր կենաս,
Վազեվազ գնաս՝
Հա՛ կանչիր Խումար, Շողեր ջան, Սոնաս,-
Խումար-իդ առան,
Սոնա-իդ տարան,
Շողեր-ըդ մնաց առանց գրկելու»...
Մի խառնակ երազ տանջում է նրան մինչև լուսադեմ:
...Նա մեկ տեսնում է, որ մի շեկ Սաթո թևերը կանթել,
Կանգնել է իրենց կալի պոնկին:
Քամին խլում է նրա մինթանան,
Որ նրա թմբլիկ ծնկները բանա
Ու ցույց տա խալը՝ ծալի մեջ ծնկի:
Հետո այդ խալը դառնում է հանկարծ մի պուտ սև թանաք
Այն Շարակնոցում Սաղմոսավանքի,
Ուր այդ կաթիլից իրար են ձուլվել զարդախազերը...
...Ու մեկ էլ քամին քանդում է հարսի դեղձան մազերը,
Եվ այդ մազերը - լարերի նման -
Ձգվում են մինչև ոտքերը նրա,
Ու շեկլիկ-մեկլիկ, աչքերով ծավի
Այդ հարսը հանկարծ... դառնում է տավիղ,
Եվ այդ ոսկելար, և այդ մսեղեն տավիղի վրա
Քամին նվագում ու... վերծանում է մեռած խազերը:
Ուզում է որսալ ու ձայնագրրել
(Ա՛յ, հիմա՛- հիմա՛ լռած խազերի
Մեռած գաղտնիքը նա պիտի պարզի
Եվ իր մեծ գյուտով աշխարհը սարսի),
Բայց մինչ այդ արդեն նախանձոտ քամին այնպես է փչում,
Որ կտրատելով լարերը բոլոր՝
Վերև է ցցում.
Հիմա ո՛չ տավիղ,

Ո՛չ էլ վերծանվող մեռած խազերը:
Հիմա հուրհրան բոցեր են թվում դեղձան մազերը,
Դեղձան մազերը թվում են հուր վառ՝
Բարակ ծխի հետ պարզված երկնքին:
Եվ հարսը հիմա դառնում է բուրվառ
Ու շուրջը փռում բուրմունքը խնկի:
Աղջիկը բուրվա՞ռ,- որտե՞ղ է լսված...
Բայց հանկարծակի քամին դադարում
Եվ, գունդուկծիկ, բարդուն է թառում
(Ի՞նչ անտանելի շոգ է , տե՛ր աստված)...
Ու դարձյալ նրա մազերը դեղձան,
Որ ծուփ-ծուփ էին՝ ծալեծալ դարձան.
Բուրվառ չէր արդեն,
Այլ կրկին
Մի կին,
Բոցավառ մի հա՞րս,
Թե՞ խարտյաշ աղջիկ,
Եվ տղամարդու հայացքից ազդված՝
Պտույտ է գալիս, որ թողնի փախչի
(Էդ ո՞ւր, անհոգի՛, էդ ո՞ւր, անաստվա՛ծ)...
Մինչ տեսիլքով է աչքը հիանում՝
Սուրացող հարսը մինթանի փեշով
Պտտահողմի պես սյուն փոշի հանում
Եվ թեպետ - շո՛գ է - քիչ զով է անում.
Բայց մի սեղման բուռ փոշի է ցանում
Խեղճի աչքերը...
Ու նա քնի մեջ
Ձեռն ակամայից աչքին է տանում,
Որ կսկրծում է ու մրմրոում է:
Աչքերը ձեռքով նա ճմրոում է,

Քնից արթնանում...

ՂՈՂԱՆՋ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Հետևում է տարին տարուն, միտքը՝ մտքին,
Հետևում է դեռ նոր գտած ելքը մուտքին:
Ապրում է նա աչքը՝ գրքին,
Ուշքը՝ երգին:
Ե՜րգ և ուսո՛ւմ,
Շարակնոցնե՛ր ու Մանրուսո՛ւմ...
Մինչ օրերն են համբր հոսում՝
Մտքի հետ է միտքը խոսում.
-Խազե՛ր, խազե՛ր,- թող փորձ անի,
Գուցե մի օր և վերծանի,
Ու ժողովուրդն ապերջանիկ
Նախանձելի բախտ ստանա,
Աղքատացած մի ընտանիք
Ծով գանձերով հարստանա:
Բայց խազն է խազ ու գիրքը՝ գիրք:
Իսկ գրքից զատ կա կյանք ու գիրկ,
Իսկ խազից զատ կան խաղ ու տաղ՝
Կենսաթրթիռ, լուսաթաթախ,
Որ ապրում են, շնչում-հնչում
Մարդկանց շրթին, իր ականջում.
Որ կենդանի մարդն է հյուսում
Ու կենդանի մարդուն հուզում.
Որ հոսել են ու տեղ հասել
Ու չեն դարձել դեռ Մանրուսում,
Ու չեն դարձել մեռած խազեր...
Ո՞ւր են դրանք, ո՞ւր են սակայն:

Այսօր թե կան՝
Վաղը չկան.
Շուրջն ամեն տեղ
Երգվում են դեռ,
Բայց երգվելուց թե դադրեցին,
Խազերի պես, մեկ էլ տեսար,
Համրացան ու քար կտրեցին:
Որտեղի՞ց են դրանք գալիս,
Եվ ի՞նչ ճամփով, ո՞ւր են գնում,
Ի՞նչն է անցնող փրփուր տալիս,
Եվ ջրի պես ի՞նչն է մնում:
Ի՞նչն է այնտեղ ոգևորիչ,
Ինչո՞վ է խորթ և հարազատ,
Ինչո՞վ մոտիկ, ինչո՞վ է զատ
Աշխարհիկը հոգևորից:
Ի՞նչն է պայծառ, ի՞նչը՝ մթար,
Ո՞րն է քոնը, ո՞րն է օտար,
Ի՞նչն է եղծված կամ անվթար,
Ի՞նչն է կոպիտ կամ նազելի...
Իսկ թե հանկարծ այդտեղ գտար
Բանալիքը մունջ խազերի՞...

ՂՈՂԱՆՋ ՕԾՄԱՆ

Եվ որտեղ երգն էր՝
Այնտեղ էլ նա էր...
...Ուրա՞խ է կյանքը,
Տխո՞ւր, դաժա՞ն է.
Միշտ ժողովրդից երգն անբաժան է.
Նա միշտ երգով է բանում ու դատում,

Սիրում ու ատում,
Վիշտը փարատում.
Երգով է ուրախ,
Երգով է տխուր,
Երգով է վառվում, երգով է մխում.
Երգով է նա միշտ վարում ու հերկում,
Մանում ու ներկում,
Երեխա գրկում.
Երգով քաղում է,
Աղում-մաղում է.
Երգով է կնունք, հարսանիք անում,-
Երգով է օրը բացվում-տաքանում,
Երգով է նորից օրն իրիկնանում...
Իսկ նա՛...
Այդ ե՞րբ էր,
Այդ ե՞րբ էր,
Ե՞րբ էր.
Տասներկուամյա թշվառ մի որբ էր,
Երբ ձեռքից բռնած Ճեմարան բերին,
Եվ որբուկ Սողոն Սողոմոն դարձավ:
Ու չար թե բարի այդ ճանապարհին
Ե՛վքս տասներկու բոլորակ տարի
Ճեմարանի մեջ եկավ ու անցավ,
Ու Սողոմոնը... Կոմիտաս դարձավ՝
Ի խոր հարգանքս
Այն հոգեզվարթ կաթողիկոսի,
Որ տասներկու դար դրանից առաջ
Ապագա հունձի հունդերը ցրած՝
Ծիրը բաց արեց
Հայոց մեղեդու անթաղ ակոսի:

Նա բանաստեղծ էր
Ու երգաստեղծ էր.
Նա ուներ վառ ձայն
Ու նվագման ձիրք.
Եվ իր անվան հետ թողեց մի արձան՝
Խոսուն,
Բայց անձայն՝
«Նուիրեալք անձինք»:
Ձգվել էր դարը, ու երկարաձիգ
Դարի ետևից նորն էր սողացել.
Եվ հայ մեղեդին
Դար-դարի վրա
Կրակի նման վառ փողփողացել,
Տարուբերվել էր ծփան գետի պես,
Շեշտվել նետի պես,
Մխվել սրտերում
Ու դողդողացել:
Աշխարհասքիյուռ հայոց թեմերի
Պատարագատու բոլոր բեմերին
Քանիսնե՜րն էին մի պահ շողացել,
Քանիսներն էին...
Եվ սակայն ոչ ոք
Հայոց հինավուրց կաթողիկոսի անունը երբեք
Ո՛չ ստացել էր որպես թանկ ընծա,
Ո՛չ էլ գողացել:
Եվ հիմա - հանկա՜րծ - հայոց նորընծա
Երկրո՛րդ Կոմիտաս,
Որ Հայրապետի
Անվանը պիտի
Ամենայն ինչում

Տա նո՛ր մի հնչում,
Սուրբ հիշատակը մշտավառ պահի:
Ո՞ւմ մտքով կանցներ այդ վսեմ պահին,
Թե այդ նորընծա-նոր Կոմիտասը
Պիտի մոռանա իր պարտավորիչ
Անխոս ստացած պատվիրան դասը՝
Պիտի նա մի օր երախտավորից
Յուրովի դառնա մի չար ապերախտ՝
Պիտի կողոպտի մի թափուր դրախտ.
Հոգևոր պապի՝
Իր անվանատուր
Կաթողիկոսի անունն ստվերի,
Հակառակ անխոս տրված պատվերի՝
Եվ հիշատակը մոռացության տա,
Իր շենշող կյանքի կարմիր բոցերով
Մատիտի նման թավ ընդգծելով
Իր մեծ նախորդի մեռածության տակ...